

ԱՐՁԱՆ ԱԳՐ ՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԵՆԻԱՄԻՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

15 նոյեմբեր 2013 թվական

գ. Բենիամին

Համաձայն ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 190-Ա հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքներում 2013 թվականի վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի» և ի կատարումն ՀՀ Շիրակի մարզպետի 2013 թվականի հոկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բենիամինի համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 129 կարգադրության, աշխատանքային խումբը մասնակցությամբ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության պետ Կառլեն Աբրահամյանի (խմբի ղեկավար), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի գլխավոր մասնագետ Սուրեն Ավետիսյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ Արմեն Հարությունյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) առաջին կարգի մասնագետ Օֆելյա Մխիթարյանի (խմբի անդամ), ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Բենիամինի համայնքի ղեկավար Արտակ Անտոնյանի Բենիամինի համայնքում կատարել է վարչական հսկողություն, որն ընդգրկել է 2010 թվականի մարտի 1-ից մինչև 2013 թվականի նոյեմբերի 1-ն ընկած ժամանակաշրջանը:

Վարչական հսկողությունն սկսվել է 2013 թվականի հոկտեմբերի 30-ին և ավարտվել՝ 2013 թվականի նոյեմբերի 12-ին:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

1) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն համայնքի ավագանին 2012 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 9-Ն որոշմամբ ընդունել է իր կանոնակարգը:

2) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն համայնքի ավագանին 2009 թվականի հունվարի 22-ի-ի թիվ 2-Ն որոշմամբ